

# Յովհան Մայրագոմեցի՝ միջնադարու մեծ նառագիրը

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Ա.— ՀԱՄԱՌՕՏ ՈՒՐՈՒԱԳԻԾ ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵԱՆՔԻՆ,  
ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՇՈՒՐՋ ԳՈՅՈՒԹԻՒՆ  
ՈՒՆԵՑՈՂ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Հայ բանասիրութեան մէջ գոյութիւն ունեցող վէճերէն մէկն ալ Յովհան Մանգաղունիի եւ Յովհան Մայրագոմեցիի հարցն է եղած: Ըսենք որ մենք չենք նպատակադրուած մխրճուելու այդ վէճի մէջ: Մեր նպատակն է վեր առնել հեղինակ մը, որ արժանի է կոչուելու միջնադարու լաւագոյն ճառագիրներէն մէկը, որուն գործերը ոչ միայն գրական-գեղարուեստական արժէք ունին, այլեւ՝ պատմա-հասարակական:

Յովհան Մայրագոմեցին Զ. դարու վերջին եւ Է. դարու սկզբին ապրած յայտնի եկեղեցական եւ հասարակական գործիչ մը եղած է: Ծնած է չուրջ 570-575 թթ.: Արբահամ Կաթողիկոսի (607-615 թթ.) օրով պաշտօնավարած է կաթողիկոսարանին մէջ: Եղած է ժամանակի ամենազարգացած եկեղեցական գործիչներէն մէկը, եւ կաթողիկոսներու վստահելին: Իրեն վստահուած էր հայոց եկեղեցիի դասանանքին պաշտպանութիւնը եւ հիմնաւորումը: Մայրագոմեցիին կը պատկանի նաեւ «Կնիք Հաւատոյ» ժողովածուն կազմողի պատիւը:

Մայրագոմեցիի մասին եղած տեղեկութիւնները վեր ի վայր ոյ են: Անոր մասին կցկտուր հաղորդումներ կան ե՛ւ հայ ե՛ւ օտար աղբիւրներու մէջ, ըստ որոնց, Մայրագոմեցին լուրջ ընդհարումներ

ունեցած է Եզր Կաթողիկոսի (630-641 թթ.) հետ, որովհետեւ չէ ընդունած հայ-բիզանդական եկեղեցական համաձայնութիւնը Հերակլ Կայսրի ժամանակ, որմէ յետոյ հետացած է Գարդման գաւառը:

Ըստ Ասողիկի վկայութեան, որմէ չի տարբերի նաեւ Վարդան Արեւելցիի վկայութիւնը, Մայրապոմեցի գրած է երեք դիրքեր. «անուն միոյն՝ Սրատ Վարուց, եւ անուն միւսոյն՝ Հաւատարմաս եւ անուն միւսոյն՝ Նոյեմակ»(1): Մայրապոմեցիի անունով մեզի հասած են եօթ հատուածներ «Կնիք Հաւատոյ»ին մէջ, եւ գրուածք մը՝ «Վերլուծութիւն Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ որ ի նմա յօրինեալ կարգաց» վերնագրով:

Բազմաթիւ վէճեր ու տարակարծութիւններ գոյութիւն ունին հեղինակի կենսագրութեան որոշ մանրամասնութիւններու եւ աշխատութիւններու շուրջ, որոնք եթէ ամբողջովին դեռ չեն հարթուած, այնուամենայնիւ յայտնուած են բաւական լուրջ եւ համոզիչ կարծիքներ՝ յօգուտ Մայրապոմեցիին:

Գլխաւորաբար վէճի պատճառ հանդիսացած է այն իրողութիւնը, որ խումբ մը ձեռագրական հաւաքածոներու մէջ ճառերը վերնագրուած են Յովհան Մանդակունիի, Ոսկերեանի, Եփրեմի եւ Յովհան Մայրապոմեցիի անուններով: Բանասէրներէն մանաւանդ Հ. Բ. Սարգիսեան կը պնդէ որ այդ ճառերը կը պատկանին ոչ թէ օտար հեղինակներու, այլ՝ Մանդակունիին: Բարսեղ Սարգիսեան մասամբ ճիշդ է. այդ ճառերը օտար հայրերու գործերը չեն, բայց կը սխալի, երբ Մանդակունիին կը վերագրէ: Դժբախտաբար Սարգիսեանի արամագրութեան տակ գրեթէ չեն եղած հաւաքածոներ, որոնց մէջ նշուած ըլլար Մայրապոմեցիին անունը(2):

Էջմիածնի հմուտ բանասէրներէն՝ Կարապետ Եպս. Տէր Մըկրրտչեան, ձեռագրական նոր հաւաքածոներ ունենալով իր արամագրութեան տակ, եկած է այն եզրակացութեան որ Մայրապոմեցիին է հեղինակը այն խումբ մը ճառերուն, որոնք վերագրուած են Մանդակունիին(3): Կարապետ Եպիսկոպոսի ուսումնասիրութիւնը եւ եզրակացութիւնը լուրջ խօսք էր հայադիտութեան մէջ, որմէ յետոյ շատ մը հայ բանասէրներ այլեւս հարկ չհամարեցին հակաճառել:

1. Ստեփանոս Տարսեցոյ Աստղկան Պատմութիւն Տիեզերական, Սուրբ Պետերբուրգ, 1885, էջ 87:

2. Հ. Բ. Սարգիսեան, Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ եւ Իւր Երկասիրութեանց Վրայ, Վեներտիկ, 1895:

3. Կարապետ Եպս., Յովհան Մանդակունի եւ Յովհան Մայրապոմեցի, «Շոգակաք», Էջմիածին, 1915, էջ 84-136:

Յովհանն Մայրազոմեցիի մասին վերջերս լոյս տեսաւ փոքրիկ, արժէքաւոր մենագրութիւն մը, հեղինակութեամբ Հ. Մ. Քենդերեանի(4) : Հեղինակը փաստական նոր նիւթերու հիման վրայ ցոյց կու տայ որ խնդրոյ առարկայ 26 ճառերը, վենետիկեան երկու հրատարակութեանց(5) վերջը դեռեղուած «Ողբը» եւ «Աղօթքը» կը պատկանին Մայրազոմեցիին եւ նոյնի «Խրատ Վարուց» ժողովածուն է : Հեղինակը իր մենագրութեան մէջ առաջին անգամ ըլլալով մէկ ընդհանրութեան մէջ կը քննէ եւ կը ներկայացնէ Մայրազոմեցիի ճառերուն կառուցուածքային խնդիրները, աշխարհայեացքի արտացոլումները եւ գեղարուեստական առանձնայատկութիւնները :

#### Բ. — ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ ԺԱՌԵՐՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Մենք դորձ ունինք այնպիսի ստեղծագործութեան հետ, որ ճառն է, եւ որ գրական վերջնական ձեւաւորում ստացաւ եկեղեցական գրականութեան մէջ : Եկեղեցիի հոգեւոր առաջնորդները ճառերու միջոցով ժողովուրդին կը մեկնարանէին Աւետարանի այս կամ այն գաղափարը, եւ կը պարզէին բարոյախօսական միտքերը : Ծառերը ունին շատ կարեւոր յատկանիշ մը, որմով անոնք կը տարբերին գրական այլ սեռերէ եւ կը ստանան պատմութեան համար կարեւոր ազդիւրադիտական նշանակութիւն : Ծառերը օրը օրին գրուած ըլլալով կ'արտացոլան ժամանակի կարեւոր հարցերը եւ խնդիրները : Այս իմաստով անոնք գեղարուեստական լեզուով գրուած տեսակ մը ժամանակագրութեան դեր կը կատարեն : Այսպիսի պատմական սկզբընազդիւրի նշանակութիւն ունին, օրինակ, Ոսկերեանի «Աղբիականք» կոչուած ճառերը, ուր Ոսկերեան կը նկարագրէ Դ. դարուն Անտիոքի մէջ կատարուած ժողովրդական խռովութիւնները : Ծառերը կ'արտացոլան նաեւ ժամանակաշրջանի փիլիսոփայական հայեացքները : Հոգեւոր ճառերը կրնան կարեւոր նիւթ հայթայթել նաեւ հայոց լեզուի պատմութեամբ զբաղուողներուն, որովհետեւ այնտեղ պահպանուած են լեզուի մէջ տեղի ունեցող շատ մը լեզուական փոփոխութիւններ :

Մայրազոմեցիին ճառերը կրնան բաւական մեծ քանակութեամբ տեղեկութիւններ տալ է. դարու հայ մարզպանական շրջա-

4. Հ. Մ. Քենդերեան, Յովհանն Մայրազոմեցի, Երեւան, 1973 :

5. Տեսնու Յովհաննու Մանդակունուոյ Հայոց Հայրապետի ճառք, վենետիկ, 1836 եւ 1860 :

նի ընկերային կեանքի մասին: Հեղինակը շատ յաճախ կ'անդրադառնայ ժողովուրդի զանազան խաւերու ընկերային վիճակին, կը գրէ հասարակ ժողովուրդի կրած դառն տառապանքներու եւ զրկանքներու մասին, իշխաններու եւ անգութ վաշխառուներու գործած անտանելի յանցագործութիւններու մասին: Ճառերու բովանդակութենէն յստակ կերպով կ'երեւայ որ Մայրագոմեցին ժողովուրդին մօտիկ կանդնած հոգեւորական առաջնորդ մը եղած է, որուն մեծապէս մտահոգած է քաղաքական անյուսալի կացութեան մէջ ապրող հայ ժողովուրդի ընկերային դառն վիճակը, որուն պատճառը ոչ միայն օտարն է, այլ նաեւ՝ հայ ազնուականութիւնն ու վաշխառուական խաւը: Մայրագոմեցին, իբրեւ հոգեւորական, մտահոգւած է նաեւ անոր համար որ հասարակ ժողովուրդը սկսած է արգէն բողոքել Աստուծոյ հասցէին:

Մայրագոմեցին յստակ կերպով կը խօսի վաշխառուներու անօրէնութեանց մասին. «Ուտեն զմարմինս անանկաց, եւ ըմբեն զարին նոցա անողորմ»(6), կը գրէ ան: Ճառագիրը առանց քօղարկելու կու տայ ժամանակաշրջանի անողոք վիճակը, իր բերած անօրինութեանց օրինակները դաժան ըլլալէ դեռ աւելի են: «Ինչպիսի անօրէնութիւն է, — կը բացականչէ ան —, երբ վաշխառուն ամուլ արգանդէն բնութեամբ որդի կը պահանջէ»: Արդէն աշխատաւորը բազմիցս կողոպտուած է օտարէն, բայց ահաւասիկ կու գայ հայ վաշխառուն եւ ապառաժներէն պտուղ կ'որոնէ, քարէն կաթ կ'ուզէ կթել եւ «առանց սերման ժտի արդիւնս ժողովել, եւ ընուլ գտուն իւր անօրէն ստացուածովք»(7):

Այս կապակցութեամբ շատ ուշագրաւ են Մայրագոմեցիի «Վասն Փոխոց եւ Վաշխից» եւ «Յաղագս Մխիթարութեան Աղքատաց»(8) ճառերը: Այս վերջին ճառէն է որ կ'իմանանք թէ ժողովուրդը սկսած է խիստ կերպով դժգոհիլ ու բողոքել անարդարութեան դէմ: Այս հանդամանքը սկսած է մտահոգել Մայրագոմեցին եւ ան խիստ անհրաժեշտ կը համարէ ժողովուրդին բացատրել հարբստութեան ոչ աստուածային ծագում ունենալը, եւ, ապա, կը սկսի մխիթարել ըսելով որ ընչազուրկ ըլլալը բնաւ ալ այնքան ողբերգական չէ, որքան ժողովուրդը կը պատկերացնէ:

Հասարակ ժողովուրդին վիճակը անմխիթարական էր ե՛ւ քաղաքական ե՛ւ տնտեսական զեանի վրայ: Յակոբ Մանանդեան մամբաման կերպով կը ներկայացնէ տարբեր տեսակի հարկերը, որ ժո-

6. «Վասն Փոխոց եւ Վաշխից», տես՝ Տեան Յովհաննու... Ճառք, էջ 52:

7. Նոյնը:

8. Տես՝ Տեան Յովհաննու... Ճառք:

դովուրդը ստիպուած էր վճարելու թէ՛ ճորտատէրին եւ թէ՛ եկեղեցիին: Կային տասէն աւելի հարկեր՝ «հաս», «բաժ», «գլխահարկ», «բեկար», «կոռ», «պահակութիւն» եւ այլն(9): Այս պարագաներու մէջ եկեղեցին չի կրնար պատասխան տալ այսքան զժուար պայմաններու մէջ ապրող եւ բողոքող հայ ժողովուրդին, որ սկսած է գանդատիլ եկեղեցիին քարոզած արդար Աստուծոյ դէմ: Ըստ Մայրագոմեցիին, մարդիկ սկսած են ընդվզել եւ փաստօրէն կասկածի տակ դնել Աստուծոյ արդարասիրութիւնը. «Ասէն, Աստուած զմեծատունս սիրէ, եւ նոցուն աշառի, եւ զվաստակս նոցա յաջողէ, եւ ոչ հայի զրկանս տառապելոցն, այլ արհամարհեալ անտես առնէ»(10): Այս ճառին մէջ նկարագրելով հանդերձ անողօք պայմաններու մէջ ապրող հաւատացեալներու վիճակը, Մայրագոմեցին՝ իրրեւ հայ եկեղեցիի առաջնորդ մը, չ'ընդունիր ամենակարող Աստուծոյ դէմ եղած այս «գրպարտանքները»: Ուստի՝ կը սկսի բացատրել հարստութեան՝ իրրեւ մեծագոյն չարիքի ծագումը: Մայրագոմեցին իր մեկնարանութեանց մէջ կը մեկնի քրիստոնէական կրօնքի զաղափարախօսութեան դրոյթներէն. ամէն կերպ կ'աշխատի ցոյց տալ որ հարստութիւնը՝ չարեաց աղբիւրը, աստուածային չէ, այլ մարդ արարածն է որ չարին գիտակ ըլլալով հետեւած է անոր, եւ զահալիժած է տեսակ-տեսակ մեղքերու մէջ: Մարդը, ըստ Մայրագոմեցիի, լաւ չ'տնօրինեց, այլ զրկեց ազգատները, յափշտակեց տնանկները, որոնք իր հովանաւորութեան տակ կը գտնուէին: Կարեւոր է այն հանգամանքը, որ ճառագիրը հարստութեան աղբիւր կը նկատէ յափշտակութիւնն ու կողոպուտը, «...ի յափշտակութենէ եւ ի զրկանաց ժողովեալ անօրէնութեամբ եւ ազահութեամբ»(11): Ուրեմն, ըստ Մայրագոմեցիին, չարիքը պէտք է փնտռել մարդու չար բնօրթին մէջ, որ կը վերնայ, եթէ ան հաւատայ քրիստոնէութեան եւ կատարէ եկեղեցիին պահանջները:

## Գ. — ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻՆ ԲՍՐՈՅԱԽՕՍ

Մայրագոմեցին ունի ճառերու շարք մը, որ կը շոշափէ բարոյախօսական խնդիրներ: Այդ ճառերը շուրջ տասը հատ են, պա-

9. Տես՝ Յակոբ Մանանդեան, Գիտողութիւններ Հին Հայաստանի Շինականների Դրութեան Մասին Մարզպանութեան Երջանում, Երեւան, 1925, եւ Հայաստանի Արքունի Հարկերը Մարզպանութեան Երջանում, Երեւան, 1926:

10. «Յազագս Միխրարուքեան Ազգառաց», Տես՝ Տեառն Յովհաննու... ճառք, էջ 60:

11. Նոյնը, էջ 63:

րազայ մը, որ կը վկայէ թէ ան բաւական մօտ գտնուած է ժողովուրդին եւ մտահոգուած անոր բարոյականին անազարտ պահպանման հարցով: Մայրագոմեցիի շօշափած նիւթերը վերացական-իմաստասիրական հարցեր չեն, այլ՝ որոշակի հարցեր, առօրեայ կեանքի եւ կենցաղի մէջ բոյն դրած ախտեր, ինչպէս՝ որկրամոլութիւնը, հարբեցողութիւնը, սեռային սանձարձակութիւնները, կնաթողութիւնը, միասեռականութիւնը, անասնամոլութիւնը եւ այլն: Այս ճառերէն առաւել արժէք կը ներկայացնեն անոնք, որոնց մէջ կը խօսուի աշխահիկ կեանքի հետ կապուած ախտերու մասին, որոնք միշտ ալ մարդկութեան ներկայով ու ապագայով մտահոգուած առաջնորդներու ուշադրութեան կեդրոնը հանդիսացած են:

Այս ճառերը ուշադրաւ են նաեւ ճանաչողական իմաստով, որովհետեւ այնտեղ խօսք կ'ըլլայ այնպիսի երեւոյթներու մասին, որոնք կը վկայեն թէ քրիստոնէութեան մուտքէն երեք-չորս դար ետք տակաւին անոնք ժողովուրդին մէջ մնացեր են կամ իրբեւ հեթանոսական վերապրուի, եւ կամ՝ սոսկ մարդկային չար բնազդ: Այս առումով յատկանշական են «Թուղթ Վասն Կնաթողաց», «Վասն Անասնամոլաց եւ Իգացելոց եւ Արուազիտաց», «Վասն Բարկացողաց Բարուց» ճառերը: Մարդկային արատները քննադատելու եւ պախարակելու ժամանակ, Մայրագոմեցին կ'աշխատի հաշտեցնել քրիստոնէական վարդապետութեան բարոյական չափանիշերը ժողովուրդի կողմէ սրբապորձուած բաղձազարեայ չափանիշերուն: Հոս նախ պէտք է նշել որ քրիստոնէութիւնը եւ եկեղեցին իրենց վրայ էին վերցուցած մարդկութեան բարոյականութեան պատասխանատուութիւնն ու դաստիարակութիւնը, եւ առաջ քաշած էին «կրօնական բարոյականութիւն» կոչուած համակարգը: Հոգեւորականութեան կարծիքով բարոյական չափանիշերը կրօնական ոգիի եւ զգացման ծնունդ են, եւ կրօնքի նուաճում:

Այս ճառերուն մէջ Մայրագոմեցին առանց քօղարկման կը թուարկէ մարդկութեան խորթ այնպիսի անբարոյական արատներ, որոնց վերացումն ու ոչնչացումը նախապայման է ազգի հետագայ գոյատեւման համար: Ճառագիրը շատ անմիջական է, զրոյցի ձեւով առաջ կը տանի իր միտքը, բացատրելով թէ որքան միասարբեր է այս կամ այն արարքը մարդկութեան համար. ասկէ զատ՝ ան չի մոռնար յիշեցնելու վերջին դատաստանի օրը, եւ կը սպառնայ զեհնի ամենասարսափելի պատիժներով: Մայրագոմեցին իր միտքերը կ'արտայայտէ պատկերներով ու համեմատութիւններով: Սօսելով անասնամոլութեան մասին, առանց սքօղելու եւ շղարչելու իր միտքը, կ'ըսէ. «զի մարդ չէ, եւ չէ իսկ. իսկ անասն՞ն կոչեսցուք, այլ

և նա քան զանասունս առաւել եւս անմտազոյն գտանի՝ քանզի ոչ երբէք տեսանեմք զանասունս ի մարդոյ բնութիւն ախորժեալ» (12) :

Մասնալատուկ նշանակութիւն ունի «Վասն Անօրէն Թատերաց Դիւակահանաց» ճառը թէ՛ աշխարհայեացքային եւ թէ՛ ճանաչողական ատումներով :

Հայ քննադատական մտքի պատմութեան մէջ այս ճառը իր բնոյթով նկատուած է պահպանողական եւ յետադիմական, որովհետեւ հոն նկատած են հեղինակի անհանդուրժողականութիւնը «Թատերական ներկայացումներու» նկատմամբ: Մեր կարծիքով այս միտքը չափազանց խիստ զնահատական մըն է, որ կը տրուի Մայրապոմեցիի անձին եւ հեղինակութեան: Վերոյիշեալ ճառի մէջ նաեւ պէտք է ճշդել «Թատերք սատանայականք» արտայայտութիւնը, որովհետեւ, ոմանք այդ հասկացութեան տակ կ'ուզեն անպայման աննել դասական՝ յունական տիպի թատրոն, որ գոյութիւն ունէր Արտաշատի եւ Տիգրանակերտի մէջ: Ճառի մէջ խօսքը շատ յտակ է՝ Մայրապոմեցիին չի հանդուրժեր «Թատերք սատանայականքը», որոնց ժամանակ կ'երգէին, կը պարէին, մէկ խօսքով՝ կ'արտասանէին գուսանական երգեր սիրոյ եւ հերոսութեան մասին: Տարբերքներ են գուսանական ներկայացումներն ու թատերական ներկայացումները:

Վերոյիշեալ ճառը կարելոր է հայ ժողովուրդի մշակոյթի պատմութեան համար որովհետեւ հոն կը նկարագրուին գուսանական ներկայացումներու հետ կապուած մանրամասնութիւններ եւ անոնց զործած ազդեցութիւնը ղիտող հասարակութեան վրայ, որ կը հաւաքուէր քաղաքի (այս պարագային՝ Դուինի) հրապարակները, հաղորդ գառնալու համար այդ երգերու ողիին եւ էութեան, որ մօտիկ էր ժողովուրդի սրտին, որովհետեւ զուտ աշխարհիկ բովանդակութիւն էր: Դժբախտաբար մանրամասնութիւններ չկան երգերու թեմաներուն շուրջ, բայց կարելի է ենթադրել որ գուսանական թատերական խաղերու ժամանակ ծաղրուած են մարդիկ եւ երեւոյթներ, ինչ որ նեղ կացութեան մատնած է եկեղեցին:

Գուսանները, ըստ երեւոյթին, շատ սուր են եղած իրենց քննադատութեանց մէջ, դիպուկ ու սպաննիչ է եղած անոնց ծաղրը, բան մը, որ Մայրապոմեցիի կողմէ նկատուած է չափազանցութիւն եւ հայհոյութիւն. «Արհամարհութիւն, ձաղութիւն եւ հայհոյութիւն հոսն ի նոցանէն հանապազ... զոմանս հայհոյէ, զոմանս բամբասէ, զոմանս թշնամանէ եւ զոմանս ձաղէ, խեղութեամբ ամօթով

կուրացուցանէ. ասանց ստէ եւ յարզանօք սնափառեցուցանէ, իբրեւ զչուն կատարեալ զամենեսեան առ հասարակ խածանէ»(13):

Ինչպէս կը նկատենք, Մայրագոմեցիին եւ Սորենացիին վերաբերմունքները տարբեր են գուսանական-թատերական ներկայացումներու նկատմամբ, ընդ որում, Մայրագոմեցիին պահպանողական է պատմաճօր նկատմամբ: Ան սաստիկ վշտացած է այն պատճառով որ մարդիկ եկեղեցի չեն յաճախեր, այլ՝ ներկայացումներու, ուստի պէտք է արզիլել այդ գուսանական ներկայացումները, որոնք մարդիկը կը շեղեն ճշմարտութենէն, մանաւանդ «կանանց անհամեստից դասը», որ յոռի հորդօրներ կը ստանայ, «կոյսերը՝ պոռնկութեան, ամուսնացածները՝ շուտեան, կանայք կը դառնան ատելի իրենց ամուսիններուն եւ ամուսինները՝ իրենց կանանց, որդիները հայրերու դէմ կ'ելլեն, ծառաները՝ իրենց տէրերու դէմ»(14):

Մայրագոմեցիի այս վերաբերմունքը նշելով հանդերձ, կը խուսափինք Մայրագոմեցիին ընդհանրապէս որակել յետադիմական գաղափարներու տէր մարդ, ինչպէս կատարած են շատեր՝ մեկնելով ոչ զիտական ենթահողէ:

Մայրագոմեցիի ճառերուն մէջ որոշակի կարիք որութիւն ունին քանի մը ճառեր, որոնց մէջ քննութեան կ'առն կլին ժողովուրդի հովիւներուն՝ քահանաներու պարտականութիւնները յարաբերութիւնը ժողովուրդի հետ: Այս կապակցութեամբ ուշմբբաւ են «Վասն Քահանայից Տեսչութեան Ի Վերայ Ժողովրդեանն»-ը եւ «Յազազս Բամբասողաց եւ Չգատելոյ զՎարդապետան»(15) »(16)երը:

Այժմ տեսնենք թէ ինչ պատճառով Մայրամասեցի ստիպուած կ'ըլլայ քանի մը ճառ գրել եւ բացատրել թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ կղերականներուն իրենց պարտականութիւնները: Ներքեւ այն էր, որ հերձուածողներն ու եկեղեցիի պաշտօնական գաղափարախօսութենէն անկախ մտածողներ հիւսնալի կերպով կ'օգտագործէին կղերականութեան թուլութիւններն ու թերութիւնները, ու այդպիսով լուրջ վնասներ կը հասցնէին եկեղեցիի հեղինակութեան: Ինչպէս արդէն ապացուցուած է պատմական նորագոյն ուսումնասիրութիւններու լոյսին տակ, հերձուածողներն ու ազանդաւորական շարժումները նախ եւ առաջ ունէին ընկերային բնոյթ: Անոնք ընկերային անարդարութիւններու դէմ բողոքելու ժամանակ կասկածի տակ

13. «Վասն Անորէն Թատերաց Դիւակահաց» ցառը, Տես՝ Տեառն Յովհաննու... ճառք, էջ 127-128:

14. Նոյնը, էջ 125:

15. Տես՝ Տեառն Յովհաննու... ճառք, էջ 68, 79:

կ'առնէին Աստուծոյ անաչառութիւնը եւ կը յայտարարէին թէ անոր ստեղծած աշխարհը թերի է, ուրեմն, փաստորէն կասկածի տակ կ'առնուէր Աստուծոյ կատարելութեան գաղափարը: Մայրագոմեցին, իբրեւ հոգեւորական եւ կաթողիկոսարանի փակակալ ու տեղապահ, պէտք է պաշտպանէր եկեղեցին: Ան խիստ անհանդուրժող է մանաւանդ երբ աշխարհականներ կը քննադատեն: Ըստ իրեն, եկեղեցականներու հասցէին ուղղուած քննադատութիւնները կրնան վերածիլ հաւատքի քննադատութեան. ահա՛ Մայրագոմեցին աւելի շատ յուզող եւ մտահոգող մասը այդ քննադատութիւններուն: Վերոյիշեալ երկու ճառերուն մէջ ան կը բացատրէ ժողովուրդին եւ քահանաներուն փոխարարելութեանց էութիւնը և ուղղակի կ'ըսէ որ աշխարհականը պէտք է անպատուէ քահանան, որովհետեւ ան իր կարգը ստացած է Աստուծմէ, ուստի եւ անոր ներկայացուցիչն է այս երկրի վրայ, «...մի՛ քններ, - կ'ըսէ ան, - զվարս առաջնորդին, եւ մի՛ զքահանայս եւ զվարդապետս քո բամբասեր: Չառեր հրաման քննել զմեզս ուրուք, թող թէ զքահանային. Աստուծոյ է քննել եւ դատել, դու զի՞ քննես եւ դատես եւ հայհոյես: Զքո վարսդ քննես եւ դատես եւ մի՛ զառաջնորդաց. բայց եթէ ի հաւատս ինչ անպիտան իցէ, եւ թիւրս ինչ ուսուցանիցէ...» (16): Այսուհանդերձ, սակայն, Մայրագոմեցին կոյր հնազանդութեան ալ կոչ է՛րներ ժողովուրդին, եւ կ'ըսէ որ եթէ զժգոհ է ան, պարզապէս կարելի է հեռու մնալ: Ասկէ զատ ան չի խուսափիր անիծելէ տգէտ ու կաշառակեր կղերականները:

## Դ. — ՃԱՌԵՐՈՒ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Ճառի նպատակն է համոզել այս կամ այն միտքը, բացատրել բարոյական չափանիշերը, իսկ քննադատել՝ հակա-բարոյական արարքներն ու խորթ երեւոյթները: Համոզելու համար՝ ճարտասանը կ'օգտագործէ զեղարուեստական գրականութեան ընձեռած բազմաթիւ հնարանքներ՝ զեղարուեստական պատկեր, փոխարբերութիւն, այլաբանութիւն եւ այլն: Ճարտասանը իր խօսքը աւելի տպաւորիչ դարձնելու համար կը դիմէ նաեւ քերթութեան արուեստին: Այս իմաստով, Մայրագոմեցիի ճառերը գերազանց նմուշներ են մեր մատենագրութեան պատմութեան մէջ:

Առհասարակ, իբրեւ կարեւոր առանձնայատկութիւն, կը նկատենք որ Մայրագոմեցին որոշակի է իր հարցադրումներուն մէջ:

անտեղի կերպով չի ծառայիր, իսկ երբ կը խօսի որեւէ իմաստասիրական հարցի մը մասին, չի մնար վերացականութեան ամպերու մէջ, այլ՝ կ'աշխատի բացատրել հարցը համեմատելով զայն հասարակ մարդուն կողմէ հասկնալի ու ըմբռնելի որեւէ երեւոյթի մը կամ առարկայի մը հետ: Ան կ'ըսէ որ երրորդութիւնը մէկ է՝ անձերն ու անուանումները տարբեր: Այս միտքը հասկցնելու համար կը բացատրէ այսպէս՝ ինչպէս որ մարդը բոլոր տարիքի արտայայտութիւններու մէջ կը մնայ մարդ, այսինքն՝ մարդը մարդ է թէ՛ պատանեկութեան, թէ՛ երիտասարդութեան եւ թէ՛ ծերութեան հասակի մէջ, այնպէս ալ երրորդութիւնը մէկ է իր տարբեր արտայայտութիւններուն մէջ:

Մայրագոմեցիի ոճը պարզ ու անպաճոյճ է. չկան կեղծ ու արհեստական ձեւեր, բռնագրօսիկ ճիւղ, բառախաղեր, որոնց չափազանց շատ անգամներ կը հանդիպինք նոյն շրջանի հայ եւ օտար եկեղեցական այլ գործիչներու գործերուն մէջ: Մայրագոմեցիին անմիջական է ընթերցողի հետ, բնաւ չի թաքցներ իր զգացմունքներն ու ապրումները երբ խօսք կ'ըլլայ որեւէ անբարոյական արարքի մասին: Առհասարակ անոր ստեղծագործութեան մէջ առանձնայատուկ տեղ կը զբաւէ ինքնարացայտումը. ան ինքզինք կը դնէ լսողներուն կամ ընթերցողին տեղ, միջոցառում մը, որ տաղանդաւոր ճարտասանին հնարաւորութիւն կու տայ անկաշկանդօրէն արտայայտելու իր յոյզերն ու ապրումները: Վերոյիշեալ յատկանիշով ալ պայմանաւորուած է Մայրագոմեցիի ճառերու այլ յատկանիշ մը՝ քնարերգականութիւնը:

«Ողբալով յիս հոգի իմ հիացեալ զարմանամ, եւ սոսկալի հիացմամբ դողութեամբ անձն իմ հեծէ անդադար, առ միշտ հանապազ զմտաւ անելով, թէ յորպիսի խաւարայինս ախտից սողի իջանէ ժպրհութիւնս մեր, ընդ որոյ ախտիւ տարակուսեալ լեզու իմ տկարանայ առ ոչ բաւել ցուցանել զահեղ պղծութիւնս...» (17):

Մէջբերուած հատուածը մեզի կը յիշեցնէ «Մատեան Ողբերգութեն»էն հատուածներ, ուր Նարեկացին նոյնպէս կը դիմէ ինքնարացայտուման:

Մայրագոմեցիի ճառերը սրտաբուխ են, անկեղծ, իսկական ապրումով ու ալրումով զրուած, ունին ողբասացութեան որոշ տարբեր, որոնք կ'արագացնեն ճառի մտքին անմիջական ազդեցութիւնը ընթերցողին վրայ: Մայրագոմեցիին չկարենալով տանիլ մարդոց անօրէնութիւններն ու չարութիւնները, իրբեւ մարդկութեան համար

տառապող հոգի մը, կ'ողբայ մարդկութեան մէջ գոյութիւն ունեցող անիրաւութիւններն ու անարդարութիւնները: «Ո՞ւր երթեալ դադարեցից եւ լացից դահեղ անօրէնութիւնս, որ զիս ճմլեցուցանէ, եւ կամ ո՞ւր լռեալ զօղեցից թախծեալ մեղօքս, եւ մաշեալ յամենայն դաղբալի եւ չարալուր համբաւոյս՝ որ միշտ զսիրտ իմ գելու, եւ զալարեցուցանէ զաղիս իմ ողբալով»(18):

Կան բազմաթիւ հատուածներ, ուր ի յայտ կու գան Մայրագոմեցի ճարտասանի եւ ողբասացի յատկութիւնները, որոնք ճառերէն ոմանք կը բարձրացնեն գրական-գեղարուեստական երկի աստիճանին: Այս հատուածները կրնան դասուիլ մեր հին գրականութեան մէջ ուրոյն տեղ մը գրաւող գրական սեռի մը՝ ողբասացութեան լուսագոյն նմոյշներու շարքին:

Ողբը «որպէս գրաւոր խօսքին նախորդող եւ նրան զուգահեռ եւս ապրող անգիր ստեղծագործութիւն՝ անմիջականօրէն կապուած է մարդկային կենցաղի եւ աօրեայի հետ»(19): Այս առումով յատուկ ուշադրութեան արժանի են «Յաղագս Սիրոյ եւ Սրբութեան Որով Պտղաբերին Աբարածք»(20) ճառի վերջին յիսուն տողերը, որոնք սրտառուչ ողբասացութիւն են, չզիջելով Խորենացիի եւ Լաստիվերտցիի ողբերուն:

Մայրագոմեցիի լեզուա-ոճական այլ առանձնայատկութիւններ ի յայտ կու գան ե՛ւ վերոյիշեալ հատուածի ե՛ւ այլ ճառերու մէջ, ինչպէս՝ իմաստի սաստկացում, աստիճանաւորում, բառային կրկնութիւն: «Անցին աւուրք խաղաղութեան, հեռացան ժամանակք արդարութեան, բարձան ստուգութիւնք յաշխարհէ, մեկնեցան իրաւունք ի մարդկանէ»(21):

«Զի վաշխ չար օձին է վարդապետութեան, վաշխ դիւտք են դիւական, վաշխ թշնամոյն են սերմանք, վաշխ առհաւատչեայ է տանջանաց, վաշխ խափանիչ է բարեպաշտութեան, վաշխ ճանապարհ է գեհեհին»(22):

Հարուստ է նաեւ Մայրագոմեցիի պատկերաւոր մտածողութիւնը, գրեթէ ամէն էջի վրայ կարելի է հանդիպիլ նուազագոյն

18. Նոյնը, էջ 123:

19. Պ. Մ. Խաչատրեան, Հայ Միջնադարեան Պատմական Ողբեր, Երեւան, 1969, էջ 8:

20. «Արարատ» (Վաղարշապատ), 1903. Յունիս, էջ 564-575, Յուլիս, էջ 662-672:

21. Նոյնը, էջ 670:

22. Տեառն Յովհաննու... Ճառք, էջ 58:

Հինգ-վեց պատկերներու՝ մէկը միւսէն աւելի ինքնատիպ. «Յարտասուաց արծաթ ժողովէ»... «Այլ ի բազմաց քրտանց յօրինեն սեղանք նոցա»... «Իբրեւ հողմ ի հուր մտեալ վառէ ի ցասումն բարկութեան անօրէնութիւն ի զրկելիս իւր»... «Զմխտան դազանեցուցանէ ի ցասումն»... :

Մայրագոմեցիի ոճին առանձնայատկութիւններէն մէկն ալ դարձուածքներն են, որոնց մեծ մասը կու գայ ժողովրդական լեզուամտածողութենէն :

Գարձուածքներով զրելը միջնադարուն կը համարուէր մեծ վարպետութիւն, սակայն յաճախ այդպէս զրելը չարաչառուած է՝ պատճառ դառնալով նիւթի անմատչելիութեան : Սակայն Մայրագոմեցիի ճառերը զերծ են նման խրթնարանութիւններէ ու ոլոր-մոր դարձուածքներէ : Ընդհակառակը, անսնք աչքի կ'իյնան իրենց պարզութեամբ .

«Հրամայեաց քարամբ տալ զրեբան նորա»	= քարով ծեծեն
«Հնազանդեցուցանեն զպատերազմ»	= յաղթեն
«Հարտահարել զիւր կամսն»	= յամառիլ
«Եթուք յաւազանն»	= ուրաջաւ մկրտութիւն
«Ճարաւահատ լինելի»	= ծարաւէն մեռնիլ
«Գումար հասեալ կայ ի վերայ»	= խմբովին
«Քնոյ տալ զանձն»	= ննջել
«Եւծանել զջիզ սատանայի»	= յաղթահարել
«տալ զունկն բանի»	= լսել
«կապել զանձն ի սէր»	= սիրել

## HOVHAN MAIRAGOMETSI: A GREAT MEDIEVAL HOMILIST

MINAS KOJAYIAN

### (Summary)

Hovhan Mairagometsi, the well known ecclesiastical figure and firm defender of the Armenian church, who lived in the end of 6th and early 7th centuries, was a prominent homilist, whose works have historical and social value. As a moral philosopher, Mairagometsi fights the materialistic tendencies of the people, pointing out the evils of materialism. His works have also literal and esthetic value.